



29. ՔՅՈՍԵՔԸ

Մե գեղի մեջ աբրրամ էր մե ոչպար մարթ, էդ մարթի անունը
Գևո էր: Գևոն մե կնիկ ունեք, մե հատ էլ տղա:

Օրերից մե օր մարթը կնգան ասում ա. —Ա՛յ կնիկ, բեր էս մե եզը
ծախենք:

Կնիկն ասում ա. —Ա՛յ մարթ, քա՞նի ես ուզում ծախես:

Մարթն ասում ա. —Հարիր մանեթ՝ ո՛չ հավել, ո՛չ պակաս:

Տղեն էն յանից՝ թե. —Ա՛հ եր, որ ըտենց ա, դու գնա՛ քո գործին,
եզը տո՛ւ, ես տանեմ ծախեմ:

Հերն ասում ա. —Տղա՛ ջան, դու չես կանա ծախի, կըխափեն,
ձեռիցդ կառնեն:

Տղեն թե՛ չեն խափի:

Հերն ասում ա. —Դե դու գիղես, բայա՛ ջան:

Հեքսի օրը տղեն հելավ, եզը քցեց հառեչը, քչեց գնաց: Շատ
գնաց, թե քիչ, հանդիբավ մե մարթի:

էս մարթն ասավ. —Տղա՛ ջան, էդ ի՞նչ եզ ա:

Տղեն ասավ. —Եզ ա, էլի, տանում եմ ծախեմ:

—Ի՞նչ աժի:

—Հարիր մանեթ:

Մարթն ասավ. —Ափսո՛ս, ընձի իրեք ոտնանի եզ ա պետք, որ քո
եզն իրեք ոտնանի հըլներ, էրկու հարիր մանեթ էլ կըտիմ, —ասավ
ու հընցավ գնաց:

Տղեն մե քար վերցեց, գանեց եզան մե ոտը կողրեց, կանչեց էդ
մարթին՝ ախպեր, ախպեր, արի՛, իմ եզը իրեք ոտնանի յա: Մարթն
էլ ետ չիչկաց, թողեց գնաց:

Տղեն կաղ եզը քչեց, մե հարիր մետր հըլը չէր գացե, հանդիբավ
մե հուրիչ մարթի:

—Տղա՛ ջան, էդ եզն հո՞ւր ես տանում:

—Տանում եմ ծախելու:

—Քանի՞ ես ասում:

—Հարիր մանեթ:

Ափսո՛ս, որ իրեք ոտնանի յա, որ էրկու հըլներ, ամեն ոտին մե
հատ հարնոց կըտիմ:

Տղեն մե քար վերցեց զանեց եզան մե ոտն էլ կողրեց, ձեն տվեց՝
ախպեր, ախպեր, արի՛, եզս էրկու ոտնանի յա:

Էլ վով կըտար ախպեր, ախպերը գացե, շրճվեր էր սարի քա-
մակը:

Մեքյա մնաց, էն յանից մե մարթ էլ էրվաց, ասեց.—Ա՛յ տղա,
էդ եզը ծախում ե՞ս:

—Հրաման քեզ, ծախում եմ:

—Քանի ա՞:

—Չորս հարիր մանեթ:

Մարթն ասավ.—Ափսո՛ս, որ եզդ էրկու յա, որ մե ոտնանի հըլ-
ներ, հինգ հարիր մանեթ էլ կըտիմ: Տղեն զանեց մե ոտն էլ կողրեց,
եզը տփվավ գետին:

Էն յանից էդ մարթիք հավաքվան էկան, ասին.—Հը, ախպո՛ր
տղա, ի՞նչ տանք եզանդ:

Տղեն ասավ.—Հինգ հարիր մանեթ:

—Ա՛յ տղա,—ասին,—հո խելքդ հացի հետ չե՞ս կերե, ըստա
ընչի՞ն տանք հինգ հարիր մանեթ, եզդ հընգե, սատկըմ ա, առ էր-
կու մանեթ տանք կաշուն, պրծավ գնաց:

Տղեն եզը թողեց ըտե, հելավ լալով գնաց: Էդ մարթիք եզը մոր-
թին, բաժանին հիրար մեջ, կաշին էլ իրեք տեղ կիսին, թողին գա-
ցին:

Հիրիկունը հերը վարից էկավ տուն, ասավ.—Հը՛, տղա՛, եզը
ի՞նչ արիր:

Տղեն ասավ.—Ա՛յ հեր, հալ-նաղլն՝ ըսեսց:

Հերը ալբալը գլխի հընգավ, ասավ.—Ոչի՛նչ, բալա՛ ջան, կա-
չըկա, դու հանդիբեր ես քյոսեքին:

Հառավոտն էն բաշտեն Գևոն քնից հելավ վեր, կանչեց կնգան,
ասավ.—Ա՛յ կնիկ, իչքան ոսկի ունես, բե՛ ըստե:

Կնիկը ոսկիները բերեց տվեց մարթին:

Մարթն հելավ, ոսկիները լցեց ջերը, մե հատ էլ էչ ուներ, էչը
քցեց հառեչը, գնաց: Ծատ գնաց, թե քիչ, տեհավ՝ հեսա վերևից
իրեք հատ մարթ են գալըմ: Ջերից ոսկիներն հանեց, կոխեց էչի
քամակը, իչքան ձեն ուներ, բոռաց՝ լա՛վ էչ, լա՛վ էչ:

Էս մարթիքն էկան, ասին.—Ախպե՛ր, էչդ ծախը՞մ ես:

—Ծախում եմ:

—Քանի ե՞ս ասըմ:

—Իրեք հարիր մանեթ:

—Ա՛յ հայ, հո դու չե՞ս ցնդե, էչն էլ իրեք հարիր մանեթ կասեն:
Գևոն ասավ.—Նայած էչը:

Ընդոնք ասին.—Ա՛յ մարթ, էչն էչ ա, էլ նայած էչն ո՞րն ա:

—Այ մարթ, էդ ի՞նչ եք ասում, իմ էչը ոսկի ա թըրքըմ, հո հասարակ էչ չի:

—Իչթար թե ոսկի ա թըրքըմ:

—Բաս՛, ոսկի էլի, ոսկի, ո՞նց ա հըլնում:

էս մարթիք չըհավատացին: Գևոն էչի կողին որ բզեց, էչը թըրքեց, թըրքի հետ էկավ էրկու ոսկի հընգավ, վերցեց սրփեց, դրեց ջերը:

էդ մարթիք, որ տեհան ճիչտ՝ էչը ոսկի ա թըրքըմ, իրեք հարիր մանեթ տվին, հայի ձեռից էչն առան, հիրանց-հիրանց ուրախացան, թե՛ հային խափինք, քչին գացին:

Գևոն ասավ.—Դե գացե՛ք, ձեր քյոսա հերն եմ անիծե, որդե ձեր կասեք, ընդեղ էլ իմն ասե՛ք:

Քյոսեքը էչը բերին արին մե մարաքի մեջ, իրեք հատ էլ ջոչ կողպեք տվին վրեն:

էչը մարաքի մեջը էնքան սոված մնաց, որ հընգավ դռան հետեն ու ոտերը տնգեց, աստկավ:

Քյոսեքը հառավոտը մեշոքներն առան էկան, որ ոսկիները կրեն, գացին դուռը բռթին-բռթին, մեքյա բացին, արանքից տեհան՝ էչի նալերն էրեւում ա, քյոսեքից մեկն ասավ.—Տո ձեր բալեն չըմեռնի, էչը նապալեոն էլ ա թըրքե:

Մե կերպ դուռը բացին, տեհան, որ էչը հընգեր ա դռան հետեւը, աստկեր ա:

Դես ման էկան, դեն ման էկան, ոսկի չըքթան:

Քյոսեքից մեկն ասավ.—Կա-չըկա, էդ հայը մեզի խափեր ա, էկեք, էթանք էդ հայի հախից գանք, մեր փողերն էլ առնենք:

Հելան գացին հայի վրեն կոփվ:

Գևո, դու Գևո, էչը, որ ծախեց, գնաց չոլից էրկու հատ աղվեսի բալա բռնեց, բերեց տուն:

Կնգան ասավ.—Այ կնիկ, ես էթըմ եմ վար, աղվեսի բալեքից մեկը կապի՛ գոմի դռանը, հիրկունը փլավ կեփես, չայ կըղնես, մեքանի հատ էլ ձու կըխաչես մինչև իմ գալը:

Կնիկն ասավ.—Լա՛վ, ա՛յ մարթ:

Գևոն հելավ, եզները տվեց հառեչը, աղվեսի բալին կողջեց ու գնաց չոլը:

Քյոսեքը սալըխով էկան քթան Գևոյի տունը, ձեն տվին, կնիկը դուս էկավ, ասին.—Մարթդ հո՞ւր ա.

Ասավ.—Գացեր ա վար:

—Ո՞ր յանը:

Թե՛ է՛ն մեծ սարի քամակը:

Քյոսեքը քչին գացին սարի հետևը, տեհան՝ իսկապեստ հեսա հայր վար ա անրմ:

Փետերը քաչին, որ Գևոյին սպանեն:

—Տո քյորա՛գ հայ,—ասին,—բա դու ասըմ իր՝ իմ էչը ոսկի ա թըրքըմ...

Գևոն ասավ.—Այո՛, թըրքըմ ա, բա ձեր աչկի առաջ չըթըրքե՞ց:

Քյոսեքը վրա տվին.—Տո չո՛ւն-չան որթի, դու մեզի խափեր ես: Հեկան, որ Գևոյին քցեն ոտների տակը, Գևոն ասավ.—Մե հըլը ընձի ասե՛ք, դուք, որ էդ էչին տարաք, տաք ջուր տվի՞ք, տաք տեղ կապի՞ք:

Քյոսեքն իշկացին հիրար հերես, ասին՝ չէ՛:

—Դե որ չէ, էլ խեղճ հայվանը որդեղի՞ց ոսկի թըրքեր, վայ թե ըսկի խոտ ու դարման էլ չեք տվե:

Քյոսեքն ասին.—Ձէ՛, ոչ մե բան էլ չենք տվե:

—Բա ասըմ եք՝ ոսկի թըրքեր ...

Քյոսեքը ամոթու գլոխները կախին:

Գևոն ասավ.—Դե լա՛վ, որ ըտենց ա, էկեք էսօր էթանք մեզի կոնախ, հառավոտը ձեր փողը տամ, գացե՛ք:

Քյոսեքն համաձայնվան:

Գևոն գնաց սելի ոտին կապած աղվեսին հարծկեց, տարավ քյոսեքի կուշտն ասավ.—Աղվե՛ս, կէթաս մեր տունը, կնգաս կասես՝ փլավ քցի, չայ դնի, մե քանի հատ էլ ձու խաչի, որ տունը մարթ ա գալու:

Ասավ ու աղվեսին բաց թողեց: Աղվեսն հընգավ չուերը, հիրար համար փախավ գնաց, գեղը մնաց է՛ս յանը, աղվեսը գնաց է՛ն յանը:

Քյոսեքն ասին.—Հա՛յ, ախըր աղվեսը հուրիչ ճամփով ա էթըմ:

Գևոն ասավ.—Ոչի՛նչ, աղվեսը քյասարով ա էթըմ:

Հիրկունն էկան տուն, տեհան, որ հեսա աղվեսը գոմի դռանը կապած ա: Մտան տուն, տեհան, ինչ որ աղվեսին ասեր էր, սեղանի վրեն գրված ա՝ փլավը, չայը, ձվերը:

Գևոն ասավ.—Դե, տղե՛ք, հա՛ց կերեք:

Քյոսեքն ասին.—Մենք քո հացը չենք ուտի, մինչև էս աղվեսը չըտաս մեզի:

Գևոն ասավ.—Ձա՛նըմ, աղվեսի բանը խեր ա, հա՛ց կերեք:

Քյոսեքն ասին՝ չէ, որ չէ:

Գևոն ասավ.—Աղվեսը կըտամ, հըմա շատ թանգ ա, դուք չեք կանա ընդա հախը տաք:

Քյոսեքն ասին՝ քանի՞ ա:

Գևոն ասավ.—Վեց հարիր մանեթ:

Մարթ ա էրկու հարիր մանեթ տվին, աղվեսն առան, ուրախ-
ուրախ գացին:

Հեքսի օրը քյոսեքը աղվեսին վերցին, գացին չոլը:

Քյոսեքից մեկն ասավ.—Տղե՛ք, հէսօր դուք իմ կոնախն եք, հեսա
աղվեսին հըրկըմ եմ տուն, որ էրթա կնգաս ասի, թաղարուք տենա:

Աղվեսին հարցկեց, անգջին ասավ.—Աղվե՛ս, կէթաս մեր տուն,
կնգաս կասես՝ փլավ էփի, չայ քցի, մե աչչնի էլ արաղ առնի, մինչև
իմ գալը:

Ասավ ու աղվեսին բաց թողեց: Աղվեսն հընգավ չոլերը,
փախավ-գնաց...

Հիրկունն քյոսեն առավ հընգերներին, էկավ տուն,
ասավ.—Կնի՛կ, դե բե՛:

Կնիկն ասավ.—Ի՞նչ բերեմ, ա՛յ մարթ:

Մարթն ասավ.—Ոնց թե ինչ բերեմ: Քյոփոլո՛ւ կնիկ, բա աղվե-
սը քեզի բան չի ասե՞:

Կնին ասավ.—Ա՛յ մարթ, էդ ի՞նչ ես ասըմ, ի՞նչ աղվես, ի՞նչ
բան:

Քյոսեն տեհավ, որ կնիկը բանից բխաբար ա, ասավ.—Տղե՛ք,
կա-չըկա, էդ քյոփագ հայը էլի մեզի խափեր ա, էկեք էթանք ընդա
վերջը տանք:

Հելան գացին հայի կուշտը:

—Տո,—ասին,—չա՛ն տղի հայ, դու էս ի՞նչ օյին բերիր մեր
գլխին, բա ասըմ իր՝ աղվեսը կէթա տուն, խաբար կըտանի, հո՛ւր
ա աղվեսի տարած խաբարը:

Գևոն, որ տեհավ չարխը թարս ա ֆոռըմ, ասավ.—Դուք էդ
աղվեսին, որ տարաք չոլը, ճամփեքը սովորցրի՞ք, թե հընց ընենց,
աչքերը խուփեխուփ տարա՞ք:

Քյոսեքն ասին.—Բա ո՞նց պտի տանինք:

—Ա՛յ մարթ,—ասավ Գևոն,—բա ըսկի ճամփա-մամփա ցույց
չըտվի՞ք:

Քյոսեքն ասին՝ ոչ մե բան էլ ցույց չենք տվե:

—Դե բա ասըմ եք՝ խաբար տաներ, էլ որդեղի՞ց խաբար տա-
ներ: Ո՞նամ աղվես, թողեր եք, վո՞վ գիղի՛ հուր ա գացե:

Քյոսեքը նորից կալմակալը դրին:

Գևոն ասավ.—Լա՛վ, էլ ընչե՞ք հեռստըմ, էկեք էթանք տունը,
ձեր փողը տամ:

էկան տուն, կնիկը թաղարուք չուներ:

Գևոն կոնախներին թողեց տանը, հինքը մտավ գոմը, մե հատ
հավ մորթեց, փուճիկն հանեց, հավի արնով լցեց, կապեց կնգա
վզից, մե շոր էլ փաթթեց, էկավ կոնախների կուշտը:

Կնիկը որ նես մտավ, մարթն ասավ.—Այ կնիկ, ել փլա՛վ քեց, ձո՛ւ խաչի:

Կնիկն ըսկի տեղիցը չըշարժվավ:

Մարթն ասավ.—Այ կնիկ, ըխա քո հետ եմ:

Կնիկն էլի մնաց նստած: Գևոն կաղզավ—հընգնավորավ հի-րար, դանակն հանեց, կնգան տփեց գետին, վիզը կղրեց: Քյոսեքը խառնվան հիրար: Գևոն հիրան չըկորցրեց, գնաց պաղղանից մե հարիր տարվա հին գուռնա ուներ, բերեց դրեց կնգա քամակին, փչեց: Փչելու բաշտան կնիկն հելավ, թևերն վերցեց, ըսկսեց խա-ղալ:

—Դե՛,—ասավ,—չո՛ւտ արա, ել բանը—ման սարքի՛, թո կո-նախններն ուտեն:

Կնիկն հելավ էն սհաթը ճաշ—մաշ սարքեց, բերեց դրեց կոնախ-ների հառեչը:

Գևոն ասավ.—Դե կերե՛ք:

է՛, դու հընե, կուտե՞ք:

Կոնախններն ասին.—Ձէ՛, մենք քո հացը չենք կղրի, մինչև էդ գուռնեն չըտաս մեզի:

Գևոն ասավ.—Ջա՛նըմ, մե թիքյա հա՛ց կերեք, գուռնի բանը խեր ա:

Կոնախններն ասին՝ չէ, որ չէ:

Գևոն ասավ.—Ախպե՛ր, դուք արբանքի կաղր չեք հիմանըմ, էշըս ընենց տարաք սատկցրիք, աղվեսը դենը կորցրիք, հըմի էլ գուռնես եք ուզըմ: Ջա՛նըմ, դուք էս գուռնի գինը տվող չեք:

Քյոսեքն ասին.—Ձէ՛, չէ՛, ի՞նչ ես ասըմ, ինչ որ հուզեզ, կը-տանք:

Գևոն ոտը դհա պնդցրեց, ասավ.—Ձէ՛, ախպե՛ր, ես հերսոտ մարթ եմ, օրական մե անքամ գանըմ, կնգաս սպանըմ եմ, գուռնեն դնեմ եմ հետևին, փչըմ, լավացնըմ եմ, գուռնեն ընձի պետք ա:

Քյոսեքը որ շատ խնթրվան, Գևոն ասավ.—Լա՛վ, դե որ շատ եք դեմ հնգնըմ, մե 600 մանեթ տվեք, տամ:

Քյոսեքն հանին 600 մանեթը տվին, գուռնեն առան, ուրախ-ու-րախ գացին:

Քյոսեքի մեկն ասավ.—Տղե՛ք, մուռնաթ եմ անըմ, թողեք թո էս հառաչի օրը գուռնեն մնա իմ կուշտը:

Քյոսեքն ասին.—Լա՛վ, թո մնա:

Քյոսեն ուրախ-ուրախ գուռնեն տարավ տուն:

Քչերվան մե վախտը քյոսեն հընգնավորավ, հելավ ասավ.—Կնի՛կ, ել ճա՛շ պաղղաստի:

Կնիկն ասավ.—Այ մարթ, էս կեսքչերին ի՞նչ ճաշ:

Մարթն ասավ.—Շահն տղի կնիկ, ես քեզ ասեմ՝ ե՛լ, ե՛լ, էլ ի՞նչ ես կայնե հակաճառըմ:

Կնիկն էլի տեղից չըշարժվավ, քյոսեն հելավ դանակը կոխեց կնկա փորը, սպանեց, տարավ զուռնեն մե լա՛վ թրճեց, բերեց դրեց կնգա քամակին, մինչև լուս փչեց:

Փչեց, փչեց, տեհավ, որ կնիկը չի լավանըմ, չոքերին խփեց, ասավ.—Վա՛յ, ես ինչ զուլում բերիմ իմ գլխին:

Քյոսեն խիտրի էր, ասավ՝ հընգերներս կըզան, վրես կըծծադան, յավաչ զուռնեն տանեմ ընդանցն էլ քցեմ քյալագի մեջ: Տարավ, տվեց մյուսին, էս էլ զանեց կնգան, սպանեց, զուռնեն դրեց քամակին, փչեց, փչեց, կնիկը չըլավացավ: Տարան, տվին էն մեկին, էս էլ հիրա կնգան սպանեց, սկսեց զուռնեն փչել: Ըստա կնիկն էլ չըլավացավ:

Հառավոտը, որ լուսը բացվավ, քյոսեքն ասին՝ էթանք զուռնեն վերցնենք, տանենք տանք հային: Հելան գացին, տեհան, որ արևը դբեր ա, հըլը հիրանց էն մե հընգերը փչըմ ա:

Ասին.—Այ տղա, սո՛ւա, ձե՛նը կգրի, բոլ ա, խայտառակ հելանք:

Քյոսեն չըլսավ, բլղուղներն հայ-հայ ա ճղվեր, էնքան էր փչե: Քյոսեքն հեռոտան, մարթ ա մե բամփաչա հիչան գլխին, քաչին զուռնեն բերնից հանին:

Մուլթն հընգավ, բերին մեռած կնանքին դրին քյոսեքից մեկի տունը, էրկսին փաթթիին քեչի մեջը, դրին տան քունջը, մեկին դրին տան մեշտեղը: Գացին մարթի մեկի հետ խոսացին, ասին. «Արի՛, մեռել ունենք, տար քի՛ց Ջանգուն, տաս մանեթ փող կըտանք»:

էդ մարթն էկավ, մեռելին տարավ քցեց Ջանգուն, դարցավ էկավ, որ հիրա փողն առնի, տեհավ՝ ըհը, մեռելը տան մեշտեղին դրած ա:

—Դե,—ասավ,—փողս տվե՛ք:

Քյոսեքն ասին.—Ե՞փ ես տարե, որ փողդ տանք:

Խեղճ մարթը էս մեռելին էլ չլկեց, տարավ քցեց Ջանգուն, էկավ, որ փողն առնի, տեհավ՝ էլի նույն մեռելը տան մեշտեղին դրած ա: էս խեղճ մարթը մեկ էլ չլկեց մեռելին, տարավ քցեց Ջանգուն, իշկաց տեհավ, որ մեռելի ոտը մնացեր ա տնգված, վերցեց մե քար՝ առ հա՛, զանեց մեռելի ոտին. «Տո՛, շահն տղի մեռել,—ասավ,—նորից ես ուզըմ հըլնես գա՞ս»: Մեռելը սկավ: էդ մարթն էկավ տուն, հիրա տաս մանեթն առավ գնաց:

Հառավոտն էն բաշտեն քյոսեքն հելան գացին Գևոյի վրեն կոխի: Գևոն, որ հիմացան քյոսեքի գալը, տնից հելավ, էրկու ոտ ուներ, էրկուսն էլ փոխ առավ, փախավ: Ճամփին ոռստ էկավ մե հատ չորանի:

Չորանն ասաւ.—Ախպէր, ախպէր, էդ ընչե՞ս փախնըմ:

Գևոն ասաւ.—Չորա՛ն ախպեր, ժողովուրդն հընգեր ա հետեւիցս, ընձի ուզըմ են թաքավոր կարգեն, ես ուզի չեմ, թե դու ուզը՞մ ես, արի չորերս փոխենք, թո գան քեզի տանեն, դարցնեն թաքավոր:

Դե չորանին վով էր խելք տվե, հավատաց, ասաւ.—Շո՛ւտ արա, քանի չեն հասե:

Գևոն չորերը փոխեց, գնաց դբա ռիչարը, իսկ չորանը հաքավ Գևոյի չորերը, գնաց նստավ Զանգվի կրաղը: Քյոսեքն էկան տեհան՝ ըհը, հայը նստեր ա հեսա Զանգվի կրաղը, դինջանըմ ա: Էկան սուսուփուս, ոտ ու ձեռից բռնին, տարան քցին Զանգուն, թողին գացին:

Գևոն հառավոտը չորանի սուրուն քաչեց բազար, սկսեց ծախել:

Քյոսեքն էկան տեհան, որ հեսա հայը ըստե ռիչար ա ծախըմ: Հիրանց աչկերին չըհավատացին:

Ասին.—Ա՛յ մարթ, դու հո սատանա չես: Բա հերեկ մենք քեզի չըքցի՞րք Զանգուն:

—Ա՛յ ձեր տունը չըքանդվի, քցըմ իք, քցըմ, գոնե մե խորը տեղ քցիք, որ խորը տեղ քցաց հըլնիք, էրկու էսքան ռիչար կըբերիմ:

Քյոսեքն ասին.—Ընչի էդ ռիչարները որդի՞ց ա:

Գևոն ասաւ.—Ջրի տակի՛ց ա, որդից ա՛:

Քյոսեքն ասին.—Ջա՛նըմ, ինչ հելե, հելե, մենք հո դուչման չենք, արի էթանք էդ ռիչարների տեղը մեզի նչա՛նց տու, էթանք մենք էլ մարթ ա մե տաս-քսան հատ բերենք:

Գևոն ասաւ.—Յավաչ եք, էս մի քանի հատն էլ ծախեմ:

Մնացածն էլ մե հինգ-տաս մանեթով էժան տվեց դալալներին, քյոսեքին քցեց հետեն ու չըճվավ դբա Զանգուն:

Տարավ մե խոր տեղի վրա կայնցրեց, ասաւ.—Ա՛յ, հընց ըստեղ ա, որ կա:

Քյոսեքն հիրար ուտըմ ին, մեկն ասըմ էր՝ ընձի՛ շուտ քցի, էն մեկն ասըմ էր՝ ընձի՛ շուտ քցի:

Գևոն ասաւ՝ դե չո՛ւտ արեք, որոչեք, թե որիդ շուտ քցեմ: Քյոսեքն հերթի կայնան: Գևոն վերցեց քյոսեքի մեկին ու առահա քցեց ջրի մեջը: Ջուրը քյոսին ֆոցրեց, կոխեց տակը, քյոսեն սկսեց ձեռները դեսուղեն թափ տալ:

Քյոսեքն ասին.—Ախպէր, ախպէր, դու գիմանաս՝ մեր հընգերն էն ի՞նչ ա ասըմ:

Ասաւ.—Ասըմ ա՛ սեկց բերեմ, թե սիվտակից:

Քյոսեքն ասին.—Ասա՛, ջա՛նըմ, որից որ կըպատահի:

էն մե քյոսենն ասավ.—Ախպե՛ր, շո՛ւտ արա, ընձ էլ քցի:
Հայր չըխնայեց, ըստան էլ քցեց: Էս արաթ խերը հըլը չըհըն-
գաց, սկավ, մեկ էլ դուս էկավ, ձեռով-ոտով արավ:

Քյոսենն հարցրեց.—Հը, ախպե՛ր, էսի ի՞նչ ա ասըմ:

Գևտն ասավ.—Էս էլ ասըմ ա՛ կոտոչով բերեմ, թե քոլե:

Քյոսենն ասավ.—Ասա՛, թո քոլե՛ն բերի, քոլե՛ն, կոտոչովը լավ
գին չունի:

Վերջի քյոսենն դհա անհամփեր էր, ոտերը տփըմ էր գետին:

Հայն էլ չըհամփերավ, թափկով զանեց, ըստան էլ քցեց ջուրը,
ասավ.—Դե գացե՛ք, ձեր հերն անիծեմ, տղիս կըխափի՞ք...

Բա չեք հիմացե, որ ասըմ ին՝ տուն քանդողի տունը Աստված
կըքանդի:

